


ՀՕՅՀ

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏՎՈՄԻ  
ՀՈՒԽԻՍՑԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՆՅՈՒԹԵՐ ԶԵԿՈՒՑՈՂՆԵՐԻ ՑԵՎ  
ԿՈՒՍԼՈՒՄԱՎԱՐՈՒԹՑԱՆ ՑԱՆՑԻ ՀՈՄԱՐ



ՀԿՊ2  
2-92

23 SEP 2006  
1 DEC 2009

**ՀՈՄԿ(Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ  
ՀՈՒՆԴՅԱՆ ՊԼԵՆԱԻՄԻ  
Ա.ՐԴՅՈՒՆ ՔՆԵՐԸ**

ՆՅՈՒԹԵՐ ԶԵԿՈՒՑՈՂՆԵՐԻ ՑԵՎ,  
ԿՈՒՆԴՈՒՍՍՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՀԱՄԱՐ



ԳԱՏԱՐԱԿ - ССРА 1931

ՑԵՎԱԿԱՆ

18 SEP 2013

7032

## ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏՎՈՄԻ ՀՈԽՆԻՍՅԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

(1981 թ. ՀՈԽՆԻՍՅԻ 11--15)

ՊԵՏՇՐԱՏԻ ՏՄԱՐԱՆ  
ԳԼԱՎԼԻՏ 6722 (բ)  
ՀՐԱՏ. № 1803  
ՊԱՏՎԵՐ 4524  
ՏԻՐԱԺԸ 5000

Կուսակցության կենտրոմի հունիսյան պլենումի վորոշումները նշում են վողջ Փրոնտով սոցիալիստական ծավալուն աջշալի հետազա աստիճանը: Այդ բարձրագույն աստիճանն արտահայտվում է այն բանով, վոր լնդլայնվում են ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման շրջանակները: Այն վիթխարի հաջողություններից հետո, վոր ձեռք բերեց կուսակցությունը արդյունաբերության և գյուղատնտեսության վերակառուցման բնագավառում, արմատական վերակառուցման պրոցեսները պլենումի վորոշումներով ուղղվում են դեպի ժողովրդական տնտեսության նոր ճյուղերը: Տրանսպորտի խնդիրը, վորը դրվեց հունիսյան պլենումում, ամենից տուած և գլխավորապես երա վերակառուցման պրոբլեմն է:

16-րդ կուսամաքումարում արտասահած իր ձառնում ընկ. Ստալինն ասում եր.

«Կարիք չկա յերկար կանգ առնել այն վիթխարի նշանակության վրա, վորպիսին ունի տրանսպորտը վողջ ժողովրդական տնտեսության համար: Յեկ վոչ միայն ժողովրդական տնտեսության համար: Ինչպես հայտնի յէ, տրանսպորտը ամենալուրջ նշա-

11062-53

նակություն ունի նաև յերկրի պաշտպանության համար : Յեվ ահա , չնայած տրանսպորտի , վիթխարի նշանակության , տրանսպորտի տնտեսությունը , այդ տնտեսության վերակառուցումը դեռևս յետ է մնում զարգացման ընդհանուր տեմպից : Հարկավո՞ր ե արդյոք ապացուցել , վոր նման դրությամբ մենք տրանսպորտը ժողովրդական տնտեսության կեղ տեղ զարձնելու վտանգի տակ ենք զնում , վորպիսին կարգելակի մեր առաջնազարդությունը» :

Հունիսյան պլենումի վրոշումները կուսակցությանը մորիլիցացիայի յեն յենթարկում վերացնելու տրանսպորտի այդ յետամնացությունը զարգացման ընդհանուր տեմպից , պայքարելու տրանսպորտային տնտեսության նյութական-տեխնիկական բազայի վերակառուցման համար :

Պակաս կարեվորություն չունի և մյուս խնդիրը , վորը դրվեց հունիսյան պլենումում , —քաղաքների սոցիալստական վերակառուցման խնդիրը : Պրոլետարական հեղափոխության 13 տարիների ընթացքում առաջն անգամը լինելով կենտրոնական կոմիտեյի պլենումում իրենց ամրող ծավալով դրվում են քաղաքային տնտեսության հարցերը : Յեվ զա պատահական չե : Այդ հարցի դրումը պլենումում արդյունքն ու արտահայտությունն ե այն ամենավլիթիսարի նվաճումների , վորը ձեռք ե բերել կուսակցությունը սոցիալիզմի կառուցման ասպարիզում : Ինչպես տրանսպորտի , այնպես և քաղաքային տնտեսության պլորելեմը պլենումում էրվեց պլորետարական քաղաքն արմատական վերակառուցման յենթարկելու , նոր քաղաքներ կառուցելու , կոմունալ տնտեսության դարպացման տեմպերը վերակառուցման շրջանի խնդիրների մակարդակին բարձրացելու տեսանկան տակ : Կենտկոմի այս պատմական վո-

րոշումը քաղաքի և գյուղի հակադրության վոչնչացմանը ձեռնարկելու մի ակտ ե հանդիսանում , վորպիսին թարգսը —Ենդելուը—լենինը զնում ելին՝ իրու սոցիալիզմի կարեվորագույն պրոբլեմներից մեկը :

Լենինը գրում եր .

«Վճռականորեն ընդունելով մեծ քաղաքների սուաջակմականությունը կապիտալիստական հասարակակարգում , այդ մեղ ամենելին չի խանդարում մայնելու մեր իդեալի մեջ , (և մեր գործողության ծրագրի մեջ , քանի վոր անիրազործելի բուեալները մենք թողնում ենք ընկեր ընկեր Ստրուվներին և Բերդյայելներին) քաղաքի և գյուղի հակադրության վոչնչացումը . . . Ներկայումս , յերբ հարավոր ե ելեքտրական եներգիայի փոխագորությունը լայն տարածության վրա , յերբ արանսպորտի տեխնիկան այս քան ե բարձրացել , վոր կարելի յե ամենի վորը (ներկայի համեմատությամբ) ծախքով փոխագրել ճանապարհորդներին մենակ ժամում 200 վերսից ավելի արագությամբ , չկա նաև վոչ մետեխնիկական արգելք , վոր դարերից ի վեր սակավաթիվ կեն տրոններում կուտակված զիսության և արվեստի գանձերից ովտավի վողջ աղղաբնակչությունը , վորը քիչ մե չափ հավասարաչափ դասավորությամբ գտնվում է ամբողջ յերկրում : Յեվ յեթե վոչ վոք չի խանդարում քաղաքի և գյուղի հակադրության վոչնչացմանը (ըստ վորում հարկավոր ե , իհարկե , այդ վոչնչացումը պատկերացն ել վոչ մետ տվյալ ակտի , այլ մետարող շարք միջոցառումների ձեվով) , բայց յերբեք ել միմիայն «եստետիկական զգացմունքը» չե , վոր պահանջում ե այդ» (Հ . IX , եջ 94) :

Այս «պատմականորեն կարեւը վերակառուցողական պրոբլեմներին , վորոնք բախում են այն բանից վոր Խորհուրդների յերկրության կառավագույն պահանջումը» չե :

լիդմի չըջանը» (Մոսկվայի կուսակտիվի բանաձեվից)։ պլենումի վարոշումների մեջ զուգորդվում և սոցիալիստական շինարարության կարևորագույն ընթացքի հարցերի գործնական լուծումը (բերքահամարքի կամպանիայի, աշնանացանի նախապատրաստությանն կուտաեսություններում աշխատանքի կազմակերպման հարցեր, տրանսպորտի առողջացման գործնական ձեռնարկումները, բանվոր դաստիարակի նյութական-կենցաղային պայմանների հետադա բարելավման կոնկրետ միջոցառումները)։ Պլենումի մշակած այս բոլոր գործնական միջոցառումները «նոր ետապում սոցիալիստական շինարարության կոնկրետ ղեկավարության տրպար են հանդիպանում» (Մոսկվայի կուսակտիվի բանաձեվից)։

Գյուղի սոցիալիստական վերակառուցման համար մղված պայքարի արդյունքներն ամփոփելով, հունիսյան պլենումն արձանագրեց, վոր կոլտնտեսական գյուղացիությունն արդեն դարձել է հողագործության կենտրոնական դեմքը։ Իսկ կոլտնտեսական շարժման հաջողություններն ապահովում են ցանքատարածությանը դարձակումն և հացահատիկային պլուրեմի վերջնական լուծումը։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ասպարիվում ձեռք բերված վիթխարի նվաճումների համաշխարհյայն-պատմական նշանակություն ունեցող այս ցուցանիշը և այն նոր, պատմականորեն կարեռ վերականուցողական պլուրեմները, վոր գրեց պլենումը, ծառայում են իրբեք մեր կուտակցության գլխավոր գծի բացարձակ ճշուության անհերքելի ասպարուց, վորոշակի ցույց տալով կապետուլյանտական դեմքը աշխատանքի մեջ և «ձախ» ուղղությունիստների, վորոնք արտացոլում են դասակարգային թշնամու դի-

մալը լուրիցումը հաջողությամբ զարգացող սոցիալիստական արշավի հանդեպ։ Հունիսյան պլենումը բանվորական և կոլտնտեսական ամենալայան մասսաների՝ կուսակտցության հանդեպ տածած վստահության նոր հոսանքի աղբյուր և մասսաների խանդակավառությունը, նրանց հաղթանակի կամքը թուլացնելու փորձ անող բոլոր թերահավատների ու նվացողների հանդեպ նոր հարվածի կենտրոն հանդիսացալ։

## ՊԼԱՆ

1. Յանձի Ապօնիական արդյունքները և բերքահավաքման կամպանիայի խնդիրները
2. Գարնահացանի կամպանիայի արդյունքները:
  - ա) Կոլտնտեսական շարժման վճռական հաղթանակները:
    - բ) Կոլտնտեսական գյուղացիությունն վորպես հոգագործության կենտրոնական դեմք։
    - տ) Կոլեկտիվ աշխատանքի արտադրողականությունը։
    - գ) ցանքի ընդհանուր արդյունքները։
  - բ) Կոլտնտեսությունների ամրացման և բերքահավաքի կամպանիայի խնդիրները:
    - թեկամուտների բաշխումն ըստ աշխատանքի բանակի ու վորակի, վորպես յեկամուտների բաշխման հիմնական սկզբունք կոլտնտեսություններում։
    - մ) Աշխատանքի ճիշտ կազմակերպման համար բերքահավաքի կամպանիայի ընթացքում։
    - դ) Կոլտնտեսության անխտիր բոլոր աշխատանքները կազմակերպել գործավարձի հիմունքով։
    - է) Արտադրանքի նորմաները գործավարձը կոլտնտեսություններում արմատացնելու միջոցն են։

- յի) ճիշտ և ժամանակին կատարվող հաշվառումը  
գործավարձի հիմունքն եւ :
- շ) խորհունտեսությունների ինդիրները աշխանուցնի կամպանիայի ընթացքում :
8. Կոլտնտեսությունների ինդիրները բերքահավաքի կամպանիայի ընթացքում :
4. Կուսակցության մարտական առաջադրություն եւ միջոցներ ձեռք առնելով որպեսպի արդյունաբերությունը ժամանակին հանձնի բերքահավաքի մեջնաները :
- II Յերկաքուղային տրանսպորտի վերակառուցումը և նրա աշխատանքի հետագա բարելավումը
1. Սոցիալիստական ինդուստրացումը և տրանսպորտը :
  2. Սոցիալիստական տրանսպորտի հվաճումները :
  3. Տքանսպորտի աշխատանքի թերությունները :
    - ա) դիմագրիկություն :
    - բ) աշխատանքի հարցեր :
    - շ) կաղերի մասին :
    - դ) յերթեեկություն և կլիենտուրա :
  4. Աշնան և ձմեռվա փոխադրությունների նախագառասում :
    - ա) տնտեսական հաշվարկի մասին :
  5. Նյութական-տեեխնիկական բաղան :
  6. Յերկաթուղային տրանսպորտի վերկառուցումը :
  7. Յերկաթուղային նոր շինարարություն :
- III. Մոսկվայի քաղաքային տնտեսության և ԽՍՀՄ-ի քաղաքային տնտեսության զարգացման մասին :
1. Սոցիալիստական շինարարության հաջողությունները և քաղաքային տնտեսությունը :
    - ա) քաղաքային տնտեսությունը կապիտալիզմի ո-

- րոք և պրոլետարիատի դիկտատորայի դարաշրջանում :
- բ) խորհրդացին կշամանության նվաճումները քաղաքային տնտեսության ասպարիզում :
- շ) վերակառուցել և դարգացնել քաղաքային տնտեսությունը համաձայն սոցիալիստական վերակառուցման արագ տեմրէերի :
2. Մոսկվայի քաղաքային տնտեսությունը :
  - ա) Մոսկվայի քաղաքային տնտեսությունը հետ և մնում Մոսկվայի արդյունաբերության, ազգայինակչության և վերջինիս կուլտուրական պահանջների ամժան տեմրէերից :
  - բ) ծալվակել բնակարանային շինարարությունը և բնանվորական ժամանակի կենցաղային կարիքների սովասրկման գործը :
  - շ) արմատապես փոխել Մոսկվայի վառելանյութային բալանսի կառուցվածքը և զարգացնել տեղայիկացյան :
  - դ) Մոսկվայի քաղաքային տքանսպորտի պլոտեմի լուծման միջոցառումները :
  - յ) ճանապարհային և ստորյերկրյա տնտեսություն :
  - շ) ջրամատակարարում :
  - ե) քաղաքի սանկտուրական դրությունը :
  - ը) Մոսկվայի պլանավորումը :
3. ԽՍՀՄ-ի քաղաքային տնտեսության զարգացումը :
  - ա) Արագացնել քաղաքային տնտեսության դարձացման տեմրէերը արդյունաբերական շինարարության տեմրէերի և պլանների համապատասխան :
  - բ) Նոր շինանյութեր :
  - շ) կաղմակերպել կոմունալ սարքավորման արտադրության գործը :
  - դ) տնտեսական հաշվարկը արմատացնել քաղաքային տնտեսության մեջ :

յե) Նոր կադրերով ամրացնել քաղաքային տնտեսության մարմինները;  
շ) Կազմակերպչական հարցեր։

## 1. ՑԱՆՔԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՑԵՎ ԲԵՐՔԱՀԱՎԱԲՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

### 1. ԳԱՐԱՆԱՍԱՅԱՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ա) Կոլտնտեսական շարժման վճռական հաղթանակները

1931 թ. գարնանացանի կամպանիայի հիմնական արդյունքն են հանդիսանում այն վճռական հաղթանակները, զոր ունեցած կորտնտեսական շարժումը ԽՍՀՄ-ի մարզերից ու ըջաններից մեծ մասի դյուզատընտեսական հիմնական ճյուղերում։ Կոլտնտեսությունը հիմնական արտադրողը դարձավ վիճայն հացահատիկի, այլև գյուղանուեսական կարեվորագույն հումանիթի (բամբակ, նախնդեղ, արևածաղիկ և այլն) արտադրության ասպարիլում։ Վորո՞նք են կոլտնտեսական շարժման այս վճռական հաղթանակները բնորոշող հիմնական փաստերը։

Հիմնական փաստերը հետեւյալներն են, — առ 1-ը հունիսի կոլտնտեսությունների մեջ եր 13.033.300 տնտեսություն, կամ 52.7 տոկոս։ Խորհունտեսությունները ավելի քանի կրկնապատկեցին ցանքատարածությունը։ Ծավալեց խորհունտեսությունների պիթիուրի շինարարություն վոչ միայն հացահատիկի, այլև անասնապահության և տեխնիկական կուտուրաների ասպարիլում։ Խորհունտեսությունների՝ խորհրդային հողագործության այդ առաջատար ուժի գյուղատեսական արտադրության նոր տեխնիկայի

և նոր կազմակերպման այդ գրուշակակիրների ուժին առավել կուսակցության մեծագույն հաղթանակն են հանդիսանում զյուղատնտեսության սոցիալիստական լիակատար վերակառուցման համար մզվող պայքարում։ Հիմնական հացահատիկային ըրջանների (դաշտային Ռւկայինա, Հյուսիսային Կովկաս, Ներքին Վոլգա, Միջին Վոլգայի Զավոլժիեն, Ղրիմի հարթավայր) համատարած կոլեկտիվացումն ավարտված է։ Այս ըրջաններում կոլտնաեսությունների մեջ ե գյուղացիական տնտեսությունների 80 տոկոսից ավելին և վողջ գյուղացիական ցանքի ու գյուղատնտեսական արտադրության միջոցների 90 տոկոսից ավելին։

Կոլեկտիվացման տոկոսը հիմնական հացահատիկային ըրջաններում

Առ 1-ը հունիսի 1931 թ.

Դաշտական մակարդակին ըստ կուտական մակարդակին ըստ գույնի	Հյուսիսական կովկաս	Ն. Վոլգա	Մ. Վոլգա	Ղրիմ	Գեր. հանդիսական
82,9	82	81,9	86,1	83,7	95

Մյուս հացահատիկային ըրջաններում — կենտրոնական Սևահողային Մարզ, անտառադաշտային Ռւկայինա, Միջին Վոլգայի աջ ափ, կազմակստանի հացահատիկային ըրջաններ, Արևմտյան Սիբիր, Բաշկորտունական Հեռաւ և Հեռ. Արև. Յերկիր — կոլտնտեսությունների մեջ ե գյուղացիական տնտեսությունների 50 տոկոսից ավելին և գյուղացիական ցանքերի 60 տոկոսից ավելին։

Կոլեկտիվացման տոկոսը մյուս հացահատիկային ըրջաններում

Կենտրոնական Սելահողային Մարդ	55,1
Զախարինյա Ռուկրայինա	67,1
Աջափնյա Ռուկրայինա	59,7
Միջին Վոլգա	64,6
Կազակստան	53,8
Արևմտյան Սիբիր	43,9
Բաշկիրիա	53,8
Ռուսական Հերուսական Սերկիր	66,0
Հեռավոր Արևմելյան Յերկիր	55,4
Բամբակացան և ճականդեղացան վճռական շրջան-ներում — Ռուգեկստան, Կազակստան, Թուրքմենստան և Աղրբեջան, Կենտրոնական Սելահողային Մարդի և Ռուկրայինյայի ճակնդեղացան շրջանները — կուտանսությունների մեջ ե բոլոր գյուղացիական տնտեսությունների նույնպես կեսից ավելին և կուտանսությունների միջոցով շանված ե գյուղացիական ցանքերի 60 տոկոսից ավելին:	

Մյուս հացահատիկային շրջաններում և բամբակացան ու ճակնդեղացան վճռական շրջաններում կուտիվացման ասպարիզում ունեցած այս հաջողությունները հնարավորությունն են ստեղծել համատարած կրեկտիվացումն այդ շրջաններում հիմնականուն պարտել այս տարի, և համենայն դեպս վոչ ուշ, քանի 1932 թ. գարնան:

Այսպիսով, մեր կուսակցության լենինյան ճիշտ քաղաքականության կիրառումը, անհաշտ պայքարի ընդեմ աջ ոպորտունիզմի ու «ձախ» Փրազների, հանգեցին այն բանին, վոր կատարվեցին ու գերակատարվեցին խնդրում կուսակցության

կենտրոնի 1930 թ. հունվարի 5-ի, 16-րդ կուսամամագումարի և խորհուրդների 6-րդ համագումարի վորոշումներով ուրվարժված տեմպերը: Այն խնդիրը, վորոշել եր կուսակցության 16-րդ համագումարը հնգամյակի վերջում վողջ և Միության համատարած կուտիվացումը հիմնականում ավարտելու մասին, լուծում և չտեսնված հաջողությամբ: Այդ խնդիրն անպայման կլուծվի:

բ) Կոլտնտեսական գյուղացիությունը, վորպես հողագործության կենտրոնական դեմք

Կուսակցության 16-րդ համագումարում ընկ Սաալինը, վերլուծելով խորհանաեսական և կուտանսական շինարարության արդյունքները, ասում եր.

«Գյուղատնտեսության և նրա հիմնական պըրլեմենտի բախտը այսուհետև վեսելու յեն վոչ թե անհատական գյուղացիական տնտեսությունները, այլ կուտանտեսությունները և խորհութառությունները»:

1931 թ. գարնանացանի արդյունքը յեղալ այն, վոր կուտանտեսությունները և խորհանասությունները դրավեցին վոչ շանքառարածության վոչ պակաս, քան յերկու յերրորդ մասը, հիմնական արտադրողը շառնալով վոչ միայն հացահատիկի, այլ և կարեվորագույն տեխնիկական կուլտուրաների բնագավառում: Լիովին ճշտվեցին ընկ. Ստալինի այն խոսքերը, թե այսուհետև գյուղացիության բախտը վորոշելու յեն կուտանտեսությունները և խորհանասությունները: Անհատական սեկտորի դերը գյուղատնտեսական արտադրության մեջ դարձել է յերկրորդական: Կոլտնտեսական գյուղացիությունը արդեն դարձել ե սովորագործության կենտրոնական դեմքը:

«Կոլտնտեսական գյուղացիությունն արդեռ դարձել է հողագործության կենտրոնական դիմքը, կոլտնտեսությունները դարձել են հիմնական արտադրողները վոչ միայն հացահատիկի, այլև գյուղատնտեսական կարելորպագույն հումութի ընդարձակուում (բամբակ, նակլիդեղ, արևածաղիկ և այլն):

Զքավոր և միջակ անհատական տնտեսության դերը զյուղատնտեսական արտադրության մեջ դարձել է յերկրորդական: ԽՍՀՄ-ի հացահատիկին և հումությային ըլքաններում ավարտվում ե կուլակության, վորակն դասակարգի վերացումը» (ընկ. Յակովլեվի զեկուցման առթիվ պլենումի ընդունած բանաձեվից):

Այս արդյունքը հանդիսանում է ընդհանուր բնութագրությունը դասակարգային այն ամենախորը տեղաշարժերի, վորոնք տեղի ունեցան համատարած կուլեկտիվացման և այդ հիման վրա կուլակության՝ վորակն դասակարգի՝ վերացման քաղաքականությունն իրագործելու հետևանքով: Յեթե դեռևս մի քանի տարի առաջ հողագործության կենտրոնական դեմքը միջակ գյուղացին եր, յեթե վարդացման նախորդ ետապում գյուղատնտեսության տիրապետող ձեր մանր գյուղացիան անհատ տնտեսությունն եր՝ ամեն որ, ամեն նելու իր ընդունակությամբ, ասլա այսոր հողագործության կենտրոնական դեմքն ե դարձել կոլտնտեսական գյուղացիությունը, վորը բանվոր դասակարգի զեկասություններու իրացուացման սոցիալիստական տնտեսություն. այսոր վճռական, գյուղատնտեսության բոլոր հիմնական սլրորդեմները վորոշող դեր են խաղում գործիքածությունները և կուլեկտիվ խոշոշ անաե-

ությունը, վորը արտադրության սոցիալիստական տիպ և հանդիսանում: Համատարած կուլեկտիվացման հիման վրա հաջողությամբ վերացվում են կուլակային տարրերը: Այժմ անվերադարձ կերպով լուծված ե գյուղատնտեսության զարգացման սոցիալիստական յեղանակի հաղթանակման հարցը: Դրա համար միասին մենք ընդհանուպ մոտեցել ենք «ով ում» պրոբլեմի լուծմանը նաև գյուղատնտեսության ասպարիզում: Մենք յիակատար իրավունքով կարող ենք պնդել, վոր մեր յերկրի ներքին ուժերի վոխհարաբերության տեսակերպից սոցիալիզմի հաղթանակը լիովին ապահովված է:

Կոլտնտեսական գյուղացիությունը, վոր այս որից շե վորագործության կենտրոնական դեմքն ե դարձել, հանդիսանում է խորիրդային իշխանության իրական և ամուր հենարանը: Այդ նշանակում ե, վոր բանվոր դասակարգը և նրա կուսակցությունը հանձնն կուլտնտեսական գյուղացիության՝ ձեռք են բերել գյուղում շատ ավելի ամուր մի հենարան, քան յերբեքիցե Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո անցած ամբողջ ժամանակաշրջանում: Մեր զարգացման նախորդ ետապներում մենք ամուր հենքում եյինք չքավորության վրա: Մենք հենվում եյինք անհատ տնտեսատեր չքավորի վրա, իրրե մի խալի, վորը քաղաքականապես ամենից ավելի մոտիկ եր բանվոր դասակարգին և նրա կողմն եր կանգնած, իրրե մի խալի, վորը կուլակության կողմից շահագործվելով՝ դասակարգային պայմար եր մզում վերջինիս դեմ և վորի վրա հենվում եր խորհրդային իշխանությունը կուլակության դեմ պայմարելիս: Կուլեկտիվացման մասսայական ծավալման հետ սկսվել ե այն պրոցեսը, յերբ մանր սեփականա-

ուերն արմառապես վերակազմվում և և դառնում է սոցիալիստական տնտեսության աշխատավոր: Յեվ վոստովհետև կոլտնտեսական գյուղացին հանդիսանում է սոցիալիստական տիպի խոչը տնտեսության աշխատավոր, ուստի նա կուսակցության և խորհրդային իշխանության ամենից ավելի ամուր հենարանն է դյուզում: Կուսակցական կազմակերպությունները պետք է յենեն 16-րդ կուսամագումարի այն ցուցմունքներից, ոստ վորի վողջ գործնական աշխատանքի ընթացքում պետք է կիրառել կոլտնտեսականի վրա հենվելու լուրենը:

Այդ ամենեւին չի նշանակում, թե կարելի յէ վորհե չափով թուլացնել աշխատանքն անհատ չքավորների և միջակների մեջ: Ընդհակառակը պետք է ապահովել անհատական սեփական տնտեսական կամպանիաներ անցկացնելու դեկավարությունը, անհատ տրնտեսատերերի մեջ տարվելիք վողջ աշխատանքն անմիշապելով նրանց հետագա կոլեկտիվացման խնդիրների հետ: Անհատ չքավոր ու միջակ տնտեսություններն այժմ յերկորդական դեր են խաղում: Սակայն ամենավախասակար մի տեհնդենց կլիներ անհատ չքավորների և միջակների մեջ տարվելիք աշխատանքի թերագնահատումը:

Միմիայն ոսկորտունիստներին և հատուկ չըմբռնել այն անխղելի կապը, վոր գոյություն ունի չքավորների ու միջակների հետագա կոլեկտիվացման խնդրի և անհատական սեկտորում կատարելիք աշխատանքի միջև:


գ) Կոլեկտիվ աշխատանքի արտադրողականությունը և կապատիկ և յեռապատիկ կրաքարանությունը աշխատանքի արտադրողականությունը, կրկնապատիկ և

յեռապատիկ կոնսուլտավոր մարդկային աշխատանքը հռողագործության և մարդկային տնտեսության համար, յերեւ այս բաժանության, մասն տնտեսությունից անդամ կատարվեր դեպի հասարակական տնտեսությունը (Լենին):

Այս տարվա գտանանացանի փորձը յեկավ լիովին արդարացնելու լենինի խոսքերը, խոչը հասարակական տնտեսության կազմակերպման պայմաններում գյուղատնտեսական աշխատանքի կրկնապատկման ու եռապատկման մասին: Գարնանացանը ցույց տվեց, վոր մեր յերկիրն այսոր իրոք դարձել է աշխարհի ամենախոշոր գյուղատնտեսության յերկիրը:

«Ծնորչիվ խորհանտեսությունների զարգացման և աշխատավոր գյուղացիության մեծամասնության կուկուիցացման ուղին անցնելուն, մեր յերկիրը դարձավ ամենախոշոր գյուղատնտեսության յերկիր աշխարհում: 1931 թվականի գարնանը մեր 200.000 կողեկանիվ տնտեսությունները (վորոնք միացրել են 13 միուն նախկին անհատական տնտեսություններ), 4000 նորիտնեսությունների հետ միասին ցանուլ են բոլոր մինչդեռ մնացած 12 միլիոն անհատական գյուղացիական տնտեսությունները կարողացել են ցանել գարնան ցանքերի ամրողջ տարածության միմիայն մոտ 30 %-ը»: (Ընկ. Յակովիկի գեկուցման առթիվ կենտրոնի պետության ընդունած բանաձեւից):

Գարնան ցանեմբերի 70 տոկոսից ավելի տարածություն, ունք անհանացանի այս հաջողությունները ձեռք բերել չնորհիվ հենց այն համանքի, վոր ԽՍՀՄ-ի դաշտերում գերակառ պատճեն և ունեցել կոլեկտիվ կազմակերպության մասնակիցները՝ անհատական



անտեսության տիրապետության ոլայմաններում մենք վոչ մի դեպքում չեյինք կարողանա տպահովել այն տեմպերը, վորպիսին ունեցանք այս տարի և վորպիսին ինչաղում եր ուշացած դարնան պատճառով դաշտաւին աշխատանքների լարվածությունը։ Գարնանացանի բարձր տեմպերն ամբողջ աշխարհին ցույց տվին խոչըր, հանրայնացված, սոցիալիստական տնտեսության փիթիսրի առավելությունները։

Ցանքն այս տարվա մայիս ամսվա մեկ հնգարյակամբ դղալի չափով ավելի յէ յեղել, քան անցյալ տարվա մայիսի մեկ հնգորյակում։ Ընկ. Յակովյելը կենտրոնի պլենումում տված իր զեկուցման մեջ բնրեց 1930 և 1931 թվականների ցանքի տեմպերը բնորոշող ցայտուն թվեր։ Մինչդեռ անցյալ տարվա մայիսի մի հընդորյակում ցանվում եր 6 միլ. հեկտար, 1931 թ. մայիսի մի հնգորյակում ցանվում եր 9-10 միլ հեկտար։

Ցանքերի տեմպերը 1930 յեւ 1931 թ. մայիսին  
(Ան հինգորյակներով միլիոն հեկտարներով)

	1-5	5-10	10-15	15-20	20-25	25-1
Տարի	մայիս	մայիս	մայիս	մայիս	մայիս	հունիս
1930	4,9	6,4	6,3	6,3	7,2	5,9
1931	10,9	11,2	10,4	10,5	10,0	9,1

Ինչուեա տեսնում ենք, գարնանացանի տեմպերը համարյա թե կնկնապատկվում են։ Այդ տեմպերի չնորհիվ եր, վոր խորհանությունները և կոլտնտե-

սությունները կարողացան հաջողությամբ հաղթահարել այս տարվա ուշացած դարնան պատճառով ստեղծված դժվարությունները գարնանացանի կամպանիայի ընթացքում։ Մթնոլորտային պայմանների կողմէից գարնանացանի կամպանիայի առաջ դրված դժվարությունները հաղթահարեց կոլեկտիվ կազմակերպված աշխատանքը։

Կուեկտիվ աշխատանքի բարձր արտադրողականությունը բնորոշվում է, այնուհետեւ, նրանով, վոր կոլտնտեսական ձին անհատական տնտեսության ձիու համեմատությամբ ավելի բարձր արտադրողականություն ունեցավ։ Միջին հաշվով, կոլտնտեսական ամեն մի ձիուն ընկնում ե գրեթե յերեք անգամ ավելի ցանք բան անհատական տնտեսության ամեն մի ձիուն։

Կոլտնտեսության մեջ ընդգրկված ամեն տնտեսության ընկնող ցանքը 2-3 անգամ ավելի յեղավ, քան ամեն մի անհատական տնտեսության ընկնող ցանքը։ Դրա հետ միասին կոլտնտեսություններում մենք ունենք հողամշակման վրակի ընդհանուր բարելավում։ Հետեւանքն այն է, վոր կոլտնտեսություններում մենք ունենք աշխատանքի և արտադրության միջոցների ավելի արդյունավետ ոգտագործում, վորը 2-3 անգամ ավելի յէ, քան արտադրության միջոցների ոգտագործումը մասն անհատական տնտեսության մեջ։

Կուեկտիվ աշխատանքի արտադրողականության բարձրացման դրժում խոշորագույն դեր խաղացին մեքենա-տրակտորային կայանները։ Անցյալ տարի

ՄՏԿ-ՆԵՐԸ մշակեցին մինչեւ 2 միլ. հեկտար կոլտնտեսական ցանք։ Այս տարի առ 10-ը հունիսի ՄՏԿ-ՆԵՐԸ մշակել եյին արդեն 20.261.000 հեկտար՝ վորից միլիոնավոր ու հարյուր հազարավոր հեկտար՝ տեխնիկական կոլտուրաների համար։ ՄՏԿ-ՆԵՐԸ ցանքի պլանը գերակատարված ե ամենի քան 2 միլիոն հեկտարով։ ՄՏԿ-ՆԵՐԸ անցյալ տարվա 2.347 կոլտնտության դիմաց այս տարի սպասարկեցին 46.514 կոլտնտեսություն։

«Այդպիսին ե արորից դեպի տրակտոր տանող այս նախապարհը, վոր անցավ մեր յերկրի գյուղացիական տնտեսությունը։ Թո՞ղ բոլորն իմանան, վոր Խորհրդային Միության բանվոր դասակարգը հաստատուել վստահ առաջ ե տանում իր դաշնակից աշխատավոր գյուղացիության տեխնիկական վերազինման գործը։ ՄՏԿ-ՆԵՐԸ 18 միլ. հեկտար պլանի կատարման առթիվ ընկ. Ստալինի հղած վողջույնից։»

դ) Ցանքի լնիմանուր արդյունիները.

Առ 20-ը հունիսի ցանքած ե 95.283.000 հեկտամանը պլանը կատարված ե 95.3 տոկոսով։ Սրանով անցյալ տարվա ցանքի տարածությունն արդեն գերազանցված է։ Առ 20-ը հունիսի անցյալ տարվա ցանքը գերազանցված ե բոլոր կարեվորագույն կոլտուրաների նկատմամբ։

Կարեվորագույն կոլտուրայի ցանքի արդյունքները  
(առ 20-ը հունիսի)

	Ցանքած ե հազար Տոկոսներով առ հեկտարներով	ցյատավահամերով
Ցորեն	25,280	106.9
Արևածաղեկ	4,548	131.2
Բամբակ	2,512	160.4
Ճակնդեղ	1,494	130.7
Բանջար անոցներ	1,952	170.3
Վուշ	2,913	129.7

Գարնանացանը գյուղատնտեսության տնտեսական պլանի կատարման գործում առաջին կարեվորագույն շրջանն ե միայն։ Խորհանտեսական և կոլտնտեսական շինարարության մեծագույն հաջողությունները նախադրյալ են այն բանի, վորակեալի առաջիկա բերքահավաքի կամպանիան ևս անցկացնենք նույնպիսի հաջողությամբ։

Անհրաժեշտ ե պարզ ու վորոշակելի դիտակցել, վոր բերքահավաքի կամպանիան անհամեմատ ավելի բարձր ե, քան գարնանացանի կամպանիան։ Սոցիալիստական հողագործության համար մզվող պայքարում 1931 թ. բերքահավաքի կամպանիան հանդես ե դաշիս իբրև կարեվորագույն ետապներից մեկը։

Բերքահավաքի կամպանիան այն ողակն ե, վոր պիտի ավարտի կոլտնտշարժման հաղթանակը հնգամյակի յերրորդ տարում։ Բոլոր կուսակցական, խորհրդային և կոլտնտեսական կազմակերպությունների առաջ իր ամբողջ հասակով ծառացել ե բերքահավաքին բայլշենիկորեն նախապատրաստվելու պրոբլեմը, բերքահավաքի նախասղատրաստության աշխատանքի տեմ-

պերը վերից վար անհապաղ արտգացմելու պղոբլեմը :  
Յուրաքանչյուր խորհանտեսություն, յուրաքանչյուր  
կոլտնտեսություն, պետք է կաղմակերպի իր վողջ ու-  
ժերն ու միջոցները՝ բերքը արագ, ժամանակին և ա-  
ռանց կորուստի հավաքելու համար,—այդպես և որվա-  
կենարոնական խնդիրը : Այդ խնդիրը մենք հաջողու-  
թյամբ կարողանանք լուծել, վորովհետեւ զրա համար  
մենք ունենք բոլոր հնարավորությունները, վորոնք  
թաղնված են խոշոր հանրայնացված արտադրության  
վիթխարի, հաստատագես ստուգված առավելությունն-  
երի մեջ : Այդ խնդիրը պիտք է կենսագործել,—ահա  
այն հարցը, վոր դնում ե կենտկոմի սկզբումը ամբողջ  
կուսակցության և ամբողջ յերկրի առաջ : Այստեղից  
բղխում ե այն մեծագույն նշանակությունը, վորպիսին  
ստանում ե բոլոր կուսակցական, խորհրդային և հա-  
սարակական կաղմակերպությունների կաղմակերպիչ  
գերը հնդամյակի յերբորդ, վճռական տարրա բերքա-  
հալաքի կամպանիայում :

## 2. ԿՈԼԵՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՑՄԱՆ ԽԸՆ- ԴԻՐՆԵՐԸ ՅԵՎ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԿԱՄՊԱՆԻԱՆ

Կենտկոմի սկզբումը մատնանշեց բոլոր կուսակ-  
ցական կաղմակերպություններին, «Վոր հանդսանա-  
ցանքի ու կուեկտիվացման հաջողություններով և թե-  
րագնահատել ամբողջ լրջությունը այն խնդիրների՝  
վոր դրված են մեր առաջ կոլտնտեսությունների ամ-  
րացման ու բերքահավաքի ասպարիզում, կնշանակեր  
հսկայական վնաս հասցնել կուեկտիվացման գործին» :

Անցյալ տարվա բերքահավաքի կամպանիայի փոր-  
ձը ցույց տվեց, վոր կոլտնտեսական շինարարության  
22

նվաճումները թե ապրանքային արտադրանքը պետու-  
թյանը հանձնելու և թե ներկուտնտեսական կուտակ-  
ման ու կոլտնտեսականների նյութական ժակարդակի  
բարձրացման ասպարիզում ել ավելի արդյունավետ  
կլինին, յեթե բերքահավաքի ժամանակ ունեցած կո-  
րուստները մինիմումի հասցվեյին :

Շատ կոլտնտեսություններ անցյալ տարի թերա-  
վնահատեցին բերքի հավաքման դժվարությունները,  
վատ նախապատրաստվեցին, չկարողացան ճիշտ դա-  
ռապորել իրենց ուժերը աշնանային զանազան աշխա-  
տանքներում : Հետեւանքը յեղավ այն, վոր միլիոնա-  
վոր ոռուբլու ամենաթանկարժեք դյուզատնտեսական  
արտադրանք փչացավ : Այսպես, որինակ, անցյալ  
տարվա կորուստները հենց միայն Հյուսիսային կով-  
կասի կոլտնտեսություններում հասան մոտ 70 միլիոն  
ռուբլու : Ներքին Վոլգայի կոլտնտեսությունները  
վատ բերքահավաքի հետեւանքով կորցրին 22 տոկ. :  
Հյուսիսային կովկասում, վորտեղ առանձին ցայտու-  
նությամբ յերեվան յեկան կոլտնտեսությունների տըն-  
տեսական անհարթությունները, «Հոկտեմբեր» կոլ-  
տնտեսության բերքահավաքի ժամանակ ունեցած կո-  
րուստներն այն հետևանքն ունեցան, վոր այդ խոշո-  
սպույն կոլտնտեսության (16.000 հեկտ. տարածու-  
թյուն) ընդհանուր յեկամուտը 1930 թ. կազմեց 1.400  
հազար ռ. : Մինչդեռ կոլտնտեսությունը 2 միլիոնից  
փոք պակաս յեկամուտ կունենար, իսկ կոլտնտեսա-  
կանները յերկու առաջ ավելի կատանային, յեթե չլի-  
նելին այն հսկայական կորուստները, վորպիսիք յե-  
ղան բերքի հավաքման ժամանակ : Այս կոլտնտեսու-  
թյան ընդհանուր կորուստները գնահատվում են մոտ  
500–600 հազար ռուբլի :

Այս տվյալները ցույց են տալիս, վոր բերքահամբեքի խնդիրներն ավելի բարդ են ու ավելի մեծ դըժվարությունների հետ են կապված, քան ցանքի խնդիրը, վորովհետև բերքահամբաքի ժամկետները զգալիուն ավելի կարծ են, ավելի մեծ քանակությամբ բանաժամկետ և պահանջվում են բերքահամբաքաման մեքենաներով բավարար չափով ապահովված չենք: Բերքահամբաքի կամպանիայի ուղղութուններական թերպնահատմանը վճռական հակահարված պետք է տալ:

1930 թ. բերքահամբաքի կամպանիայի ընթացքում կոլտնտեսություններում խոշոր կորուստներ պատճառած գլխավորագույն թերությունները հետեվյալներն են—  
ա) յեկամուտների բաշխումը վոչ քե ըստ աշխատանքի քանակի ու փրակի, այլ ըստ շնչերի, բ) բերքահամբաքի ասպարիզում աշխատանքի վատ կազմկերպաւմը:

ա) Յեկամուտների բաշխումն ըստ աշխատանքի քանակի ու փրակի, փրափես կոլտնտեսությունների յեկամուտների բաշխման հիմնական սկզբանենք

«Խոշոր տնտեսություն վարելու փորձի պակասությունը և յեկամուտների բաշխումը վոչ քե ըստ աշխատանքի, այլ ըստ շնչերի, վոր լայն տարածված երանցյալ տարի, ունեցան այն հետեվանքը, վոր շատ գետքերում բերքահամբաքը լրիվ չկատարվեց. բերքահամբաքի ժամանակ տեղի ունեցած կորուստները շատ մեծ յեղան կոլտնտեսություններում, իսկ աշխատանքի տարածությունը բավարար չափով ընդարձակվեց» (ԿԿ-ի հունիսյան պլենումի բանաձեւից):

Յեկամուտների ըստ չնչերի բաշխումը անցյալ տարի առանձնապես լայն տարածում ունեցավ Հյուսիսային Կովկասում, Միջին Վոլգայում և Սիբիրում: Առանձին շըջանային կոլտնտեկազմակերպություններն իրենց անձիւտ ցուցմունքներով անցյալ տարի նույնիսկ նպաստեցին բերքը և յեկամուտներն ըստ չնչերի բաշխելու ձեվի տարածմանը: Այսպես, որինակ՝ Կուրբանի ըրջկության 1930 թ. հրահանգը հանձնարարում եր «Կոլտնտեսականներին բաշխելիք բերքի մասը բայնել արտելի բոլոր անդամների մեջ (ըստ աշխատանքի քանակի ու վորակի նրանց հասանելիք յեկամուտի հաշվին), հաշվի առնելով նրանց ընտանիքի շնչերի բիոլը»: Նման դիրեկտիվը շատ կոլտնտեսությունների առիթ եր տալիս յեկամուտը ամբողջովին բարդյունքով բաշխել ըստ շնչերի, բաժիններ ու նորմաներ սահմանել, ուղղնել սպառողական ֆոնդերը: Այսպես, «Հոկտեմբեր» կոլտնտեսությունը (նախկին Կուրբանի կրուուկ) ներքին կարգապահության կանոններում ուղղակի հայտարարեց, վոր յեկամուտը «բաժանվելու» յի արտելի անդամների վրա պարենային և տնտեսական կարիքների բավարարման համար, ըստ նրանց բնտանիքի շնչերի թվի»: «Հոկտեմբեր» կոլտնտեսությունում ամեն մի շնչի արվեց 20-ական փությունն և 3-ական փությունների աշխատացորեն: Հետեվանք այն յեղակ, վոր կոլտնտեսականների մի մասը, մանավանդ նրանք, վարունք քիչ ելին աշխատում և անկանոն ելին աշխատանքի դուրս գալիս, պարտքի տակ ընկան կոլտնտեսության հանդես, իսկ մյուսները, վորոնք լավ ելին աշխատել, չկարողացան լրիվ ու ժամանակին սահմանական իրենց յեկամուտը:

Յատես, որինակ, «Նոր կյանքի հւղի» արտելում  
(Հյուսիսային Կովկաս) 1931թ. մարտ ամսին իրենց  
հասանելիք յեկամուտը լրիվ չստացածների և գերա-  
վանսավորվածների տոկոսը հետեւյալն եր,—առաջին  
բրիգադում լրիվ չեյին ստացել 83,7 տոկոս, բրիգա-  
դում գերավանսասալորել եյին 16,3 տոկոս, յերկրորդ  
բրիգադայում լրիվ չեյին ստացել 67,2 տոկոս, գերա-  
վանսասալորել եյին 32,3 տոկոս, յերրորդ բրիգադում՝  
37,6 տոկոս և 62,4 տոկոս և այլն։

Այն կոլտնտեսականները, վորոնք վատ եյին աշ-  
խատել, բայց բերքահավաքի յետուն չըջանում գեր-  
ավանսավորվել եյին հացով, բոլորովին դադարեցին  
աշխատանքի դուրս դալ։ «Հոկտեմբեր» կոլտնտեսու-  
թյունում, որինակի համար, հնձի ժամանակ, աշխա-  
տանքի յեր դուրս դալիս մինչև 70 տոկոսը։ Յեկա-  
մուտն ըստ չնչերի բաժանելուց հետո, այդ տոկոսն  
ընկալ 45-50-ի։ Կային բրիգադներ, վորոնք ամբող-  
ջովին վորոշ դուրս չեյին դալիս աշխատանքի։  
«Հոկտեմբեր» կոլտնտեսությունը, որինակի համար,  
չնայած այնքան աշխատունակ անդամներ ուներ, վոր  
վուլի կերպով կարող եր կատարել բոլոր աշխատանք-  
ները, ստիպված յեղալ վարձու բանուժի վրա ծախսե-  
ժոտ 55.000 ռ.։ Բերքահավաքի վիճման հետեւյան-  
քով կոլտնտեսությունից բոլորովին դուրս յեկան 250  
անտեսություններ։

Յեկամուտների ըստ չնչերի բաշխումը, վերացնե-  
լով կոլտնտեսականների շահագրղությունը կոլեկտիվ  
անտեսության հանդեպ, հանդում և աշխատանքային  
կարգապահության անկման և աշխատանքի շածք ար-

տադրողականության, ստեղծում և սպառողական տրա-  
մադրություններ, զարկ և տալիս պոկողականության և  
հացը դռնեղուու քաջ տալուն, ուղղում և սպա-  
ռողական Փոնդերն ի հաշիվ պետությանը վա-  
հառելիք հացի քանակի նվազման և արգելակում և ան-  
հատական տնտեսությունների նոր հոսանքը դեպի կոլ-  
տնտեսությունները։ Ահա թե ինչու կուլակները յե-  
կամուտներն ըստ չնչերի բաշխելու լողունդն ողտա-  
գործում են կոլտնտեսության դեմ պայքարելու հա-  
մար։ Այսոր արդեն կուլակը չնչում է կոլտնտեսականի  
ականջին—«Միւնույն ե, յեկամուտը հավասար ե բաշխ-  
վելու»։

Թե դրամական և թե թնարդյունիքային յեկամուտ-  
ներն ըստ չնչերի բաշխելու ամեն տեսակ փորձերի դեմ  
առաջիկա բերքահավաքի կամպանիայի ընթացքում  
ամենաանողոք, ամենավիճական պայքար պետք է միել։

Յեկամուտների բաշխումը ըստ աշխատանքի քանա-  
կի ու վորակի—ահա յեկամուտների բաշխման այն  
պարտադիր սկզբունքը, վորին հետվելով կոլտնտե-  
սությունները լիսվին կապահովեն անցյալ տարի լայն  
ծավալում ստացած վնասակար ու կործանիչ սխալների  
կրկնողությունից։

Յեկամուտների բաշխման պլանը հաստատելիս  
յուրաքանչյուր կոլտնտեսություն պետք է նախատեսի  
կապիտալ ծախքերն ապահովելու համար միջոցներ՝  
ին կոլտնտեսություններում մինչեւ 15 տոկոսի և նոր  
կոլտնտեսություններում մինչեւ 10 տոկոսի չափով—  
կոլտնտեսական արտադրության հետադարձակ-  
ման համար (անբաժան Փոնդեր)։

Նկատի ունենալով այն, վոր անցյալ տարի յեկատուտների բաշխումը խիստ ձգձգվեց և տնտեսական արքա վերջում կոլտնտեսություններն իրենց յեկատուտների վոչ ավել քան 50-60 տոկոսն ելին միայն բաշխել (միջին հաշվով), իսկ մի չարք կոլտնտեսություններ մինչեւ որս ել դեռ հաշիվները վերջնականապես չեն մաքրել կոլտնտեսականների հետ, կենտկոմի հունիսյան պլենումն առաջարկեց—ամենաուշը մինչեւ 1932 թ. հունվարի 15-20-ը վերջացնել կոլտնտեսություններում 1931 թ. յեկատուտների բաշխումը:

Եերքի բաշխում կատարելիս կոլտնտեսությունը պետք է կերի ուսուրաներով ապահովի առաջին հերթին մթերատու և բանող անասունների հանրայնացված մասին, հաշվի առնելով հոտի ընդարձակումը յեկող տարում: Մնացած կերը պետք է բաժանել կոլտնտեսականների վրա, համաձայն նրանցից յուրաքանչյուրի ունեցած աշխարերի քանակի և նկատի ունենալով նրա ունեցած մթերատու անասունների թիվը: Կոլտնտեսությունը պետք է առանձնացնի նաև սերմացուի փոնդեր այնպիսի քանակո իշխամբ, վոր առաջովի կոլտնտեսության արտադրական պլանով ցանքատարածության համար նախատեսված ընդարձակումը:

Համատարած կոլեկտիվացման շրջանների համար սահմանված 5 տոկոսային հատկացումները կոլտնտեսության յեկամուտներից պլենումը հանձնարարում և սպառքութել հետեւյալ կերպ—2 տոկոսը բաշխել հանրայնացված գույքի չափի համեմատ, 1½ տոկոսը

հատկացնել բրիգադիրների և հարվածայինների պարզելատրման ֆոնդին, 1½ տոկոսը՝ դանաղան դասընթացներում սովորող կոլտնտեսականների ոգնության փոնդին:

բ) Աշխատանիքի նիշտ կարմակերպման համար բերքահալաքի կամպանիայի ընթացքում

Ցերկորորդ թերությունը, վորը յեկամուտների ըստ հնչերի բաշխման հետ միասին վճռական դեր խաղացնցյալ տարքա բերքահավաքի ճեղքածքների դորձում, աշխատանքի թույլ և անձարակ կաղմակերպումն է: Կոլտնտեսություններն անցյալ տարի ճշնադատմանությամբ գործարձի փոխարեն կիրառում ելին որավարձը: Այդ նշանակում եր, վոր կոլտնտեսականը աշխոր գրանցել տալու համար յերբեք կարիք չուներ աշխատանքի վորոշ նորմա կատարել, այլ բավականանում եր միայն նրանով, վոր աշխատանքի յեր գալիս: Դրա հետեւյանքը յեղակ աշխատանքի ցածը արտադրողականություն և յեկամուտների հավասարեցուցիչ բաշխում, քանի վոր առանձին կոլտնտեսականների արտադրողականությունը հաշվի չեր առնվում: Որավարձի հետ միասին կոլտնտեսությունների մեծ մասում տիրապետում եր դիմադրությունը: Կոլտնտեսականները չելին ամրացվում վորոշ մեքենաների, հաճախ չելին ամրացվում բրիգադներին: Արդյունքը յեղակ այն, վոր ինվենտարի հիշտ ու արդյունավետ ոգտագործման և նրա պահպանման համար բրիգադում վոչ վոչ մի պատուիսամատվություն չեր կրում: Զնայած մի չարք կոլտնտեսություններում դի-

ժաղըկության վերացման ուղղությամբ կատարված զդալի տեղաշարժերին, այս տարվա դարնանացանի կամպանիայի ընթացքում ևս կոլտնտեսականները չեցին ամրացվում ինվենտարին, բանող անասուններին և արտադրության մյուս միջոցներին։ Դիմադրիկությունը կոլտնտեսական արտադրությունից վերջնականապես վերացնելու նպատակով, կերպի հումիսյան ոլինումը կատեղորիկ կերպով առաջարկեց— «Ամեն տեսակ աշխատանքներում պետք ե տրակտորներին, ձիերին և մասշենաներին ամրացնել աշխատողներէ մշտական կազմ՝ յուրաքանչյուր կալսիչ մեքենային, յուրաքանչյուր տրակտորին իր համապատասխան կցվող մեքենաներով, պետք ե ամրացնել մշտական բրիգադ, պետք և ստեղծել սայլապանների մշտական կազմ և այլն։ Մեծ կոլտնտեսություններում, ինչպես և շարամեջ մշակություն պահանջող և տեխնիկական մշակույթի մեծ հողամասեր ունեցող կոլտնտեսություններում, բրիգադները պետք ե ամրացվեն բերքահավաքի վորոշ հողամասերին, այն հաշվով, վորպեսզի բրիգադի աշխատանքի գնահատումը աշխորերով բարձրանա կամ նվազի, նայած տեղի ունեցած կորուսներին և բերքահավաքի արագության։ Սրան պետք ե ավելացնել նաև ամենորյա առաջադրանքների սխալները, վորը գործադրվում էր շատ կոլտնտեսություններում, չնորհիվ այն հանդամանքի, վոր այստեղ բրիգադներին արտադրական առաջադրանքներ չեցին արտքում և բրիգադները բերքահավաքի հողամասերին չեցին ամրացված։ Բրիգադները, խմբելը և առանձին կոլտնտեսականները նախորոք չդիմեցին, թե ուր և ինչպիսի աշ-

խատանքի պետք ե գնան հաջորդ որը և աշխատանքի վոր մասի համար են պատասխանատու։ Միայն ու լեռնկոյան կամ վաղ առավոտյան կոլտնտեսականներին հայտնում ելին, թե նրանք ինչ պետք ե անեն և վորտեղ՝ բանութի ղեկավարության այդպիսի կենտրոնացում ստեղծում եր բրիգադի բրների և բրիգադների անպատճանատվություն, աշխատանք ստանալու և աշխատանքի վայրը գտնելու վրա ժամանակի կորուսներում (գա, հատկապես խոշոր կոլտնտեսություններում), մեկ աշխատանքից մյուսին անցնելու վրա ժամանակի ահազին կորուսն եր պատճառում), բանութի մեծ հոսունություն եր ստեղծում բրիգադներում (հոսունությունը բրիգադում կազմում եր 450 տոկոսից մինչեւ 1000 տոկոս), վորովհետեւ այսպիսի սիստեմի պայմաններում անհնարին և մշտապես իրար հետ աշխատողների կորիզ ստեղծել։

Ուկրայնական կոլտնտեսություններից մեկում («Շլյախ ի Ալիչա»), որինակի համար, այսպիսի սիստեմի չնորհիվ, կալսիչ մեքենաները բերքահավաքի համանակ կալատեղը մոտ 19 անգամ փոխեցին։ Այդ սիստեմը ջղայնացնում եր կոլտնտեսականներին, գեցում եր աշխատանքի կարգավահությունը, գցում եր հանձնարարված գործի պատասխանատվությունը, կոլտնտեսականների մեջ տնտեսական հոգածու վերաբերքունք չեր ստեղծում կոլտնտեսական տնտեսության և նրա ինվենտարի հանչեպ։ Յեվ քանի վոր այդպիսի պայմաններում չափազանց դժվար և կանոնավորել հաշվառման գործը, ապա այդ ամենը շփոթություն եր ստեղծում հաշվառման մեջ և դրա հետեւվանքով՝ յեկամուտների բաշխման գործում։

Աշխատանքի կազմակերպման թերությունները կորուսությունում, դիմապրկությունը, ամենորյա նարդագները և այլն, զենք ելին տալիս կուլակի ձեռքը կորտնատեսության դեմ, նոր անդամների ներդրավման դեմ պայքարելու համար :

Սխատանքի կազմակերպման այս բոլոր թերությունների հետեւանքով, յեղած բարդ մեքենաները մանավանդ կալսիչները, բերքահավաքի շրջանում խիստ անբավարար չափով ելին ողտագործվում, վորութիսին ձգձգում եր բերքահավաքը և բարդացնում եր ուշատանքը, քանի վոր անհրաժեշտ եր լինում անցնել այլ աշխատանքների (աշխանացան, արտադրանքի փոխադրություն, աշխանահերկ, փայտամթերում, ջնարաբություն և այլն); ԲԳՏ-ի տվյալներով, խուրծ կապող մեքենաների ողտագործման տոկոսն անցյալ տարի կազմում եր 48-50 և այլն: «Հոկտեմբեր» կոլտնտեսությունում բերքահավաքի 145 որացուցային որերից կաւալչներն աշխատել են միջին հաշվով 58 որ, մի քունիսն ել ընդամենը 18 որ: Ամենից ավելի շատ աշխատած կալսիչների աշխատանքի որերի թիվը յեղեւ 90 որ: Կալսիչներն ողտագործվում ելին միջին հաշվով իրենց ունեցած կարողության 55 տոկոսով և մեկ հերթի: Միջին Վոլգայում մեկ կալսիչը, 900 փութորմայի զիմաց՝ տալիս եր միջին հաշվով 700 փութիսկ մի շարք կոլտնտեսություններում՝ 300-350 փութ:

գ) Կոլտնտեսության անխտիր բոլոր աշխատանքները կազմակերպել գործավարձի հիմունքով

Կենտկոմի պլենումը մատնանշեց, վոր «կոլտնտեսություններում առանց բացառության բոլոր աշխատանքները պետք ե կազմակերպված լինեն գործավարձէնք»:

Ճի հիմունքներով, այսպես, վոր գործավարձն ունենա ամենապարզ ու յուրաքանչյուր կոլտնտեսականին հասկանալի ձեւեր և կոլտնտեսականին հասանելիք աշխատանքային որերի քանակը հնարավոր լինի դրանցել նրա աշխատանքային գրքույյկում, առանց բարդ հաշվարկումների, միաժամանակ հաշվի առնելով վորակը» (Կե-ի պլենումի բանաձեմից):

Գործավարձը, չնայած այն բոլոր թերություններին, վոր տեղի յեն ունենում կոլտնտեսություններում նրա կիրառման ասպարեզում, լիովին հայտաբերել ե իր հոկայական նշանակությունն աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում: Այսպես, որինակ, Հյուսիսային կովկասի այն արտելներում, վորոնք գործավարձ ելին կիրառում, 1 աշխատը ընկնող ընդհանուր արտադրանքը կազմեց 246 ոռոքի, իսկ գործավարձը չկիրառող արտելներում՝ 179 ոռոքուու: Այդ նույն արտելներում յեկամուտները բաշխեմու՝ գործավարձ կիրառող արտելների ամենս մի աշխատումակ անդամին հասավ 112 ո., իսկ գործավարձ չկիրառող արտելներում՝ 78 ո.: Գործավարձ կիրառող արտելները պետությանն արտադրանք հանձննեին ամենս մի աշխատումակ անդամից 137-ական ոռոքու հաշվով, իսկ որավարձ կիրառող արտելները՝ մի-այն 53-ական ոռոքու հաշվով: Այսպիսով գործավարձը բարձրացնում եր աշխատանքի արտադրողականությունը, ավելացնում եր կոլտնտեսականների յեկամուտը և բարձրացնում կոլտնտեսության ապրանքայնությունը: Անցյալ տարի, բերքահավաքի և աշխատանքի կամպանիաների ընթացքում, կոլտնտեսու-

թյունները գործավարձը թույլ ելին կիրառում : Կնա-  
հատումը կատարում ելին վոչ թե աշխարերով, այլ  
դրամով, զնահատումը հաճախակի փոփոխում ելին,  
գործավարձը միայն մի քանի աշխատանքներում ելին  
կիրառում : Գործավարձ մտցրած առանձին կոլտըն-  
տեսություններում, չնորհիլ աշխատանքի վատ հաշ-  
վառման, հաշվարկումը վերջինիքով կատարվում եր  
որավարձի սկզբունքով, վորը և խախտում եր գործա-  
վարձը :

1931 թ. գարնանացանի կամպանիան դպիս ե ա-  
սելու, վոր անցյալ տարվա զատերը կոլտնտեսու-  
թյունների համար զուր չանցան : Կոլտնտեսություննե-  
րը վճռաբար հրաժարվեցին դրամական զնահատումից  
և իրեն չափ մտցրին աշխորը : Կոլտնտեսական-  
ների մեծ մասն անցավ գործավարձի (առ 1-ը մայիսի  
1931 թ. գործավարձի ելին անցել Հյուսիսային Կոդ-  
կասում՝ կողմնտեսականների 70 տոկոսը, Կենտրոնա-  
կան Սեահողային Մարզում՝ 46 տոկոս, Միջին Վոր-  
գայում՝ 80 տոկոս, Ներքին Վոլգայում՝ 53 տոկոս),  
միևնույնիւ յի յենթարկվում դիմադրիկությունը,  
կանոնավորվում ե հաշվառումը : Դրա չնորհիլ կոլ-  
տնտեսություններուն նկատելի յի աշխատանքային  
կարգապահության բարձրացում, աշխատանքի ար-  
տադրողականության աճում, ավելանում ե կոլտնտեսա-  
կանների շահագրգռությունը հասարակական տնտե-  
սության հանդեպ, պակասում են զանդատներն աշխա-  
տանքի դուրս չդալու մասին, ավելանում ե մեքենա-  
ների, ինվենտարի և անսպաւնների ողտագործման  
չափը :

Սակայն միանգամայն սիալ կլիններ հանգստանա-

այս անվիճելի հաջողություններով, չտեսնել գարնա-  
նացանի կամպանիայի ժամանակ յերեան յեկած խոշոր  
բացերը, վորոնց հաղթահարման համար անհրաժեշտ  
ե բարձրացնել կոլտնտեսականների ակտիվությունը  
բերքահավաքի ժամանակ :

Գործավարձը կոլտնտեսություններում մեծ մա-  
սամբ կիրառվում եր բրիդադային ձևով : Մինչդեռ  
գործավարձի այդ ձևը խոշոր թերություններ ունի:  
Մի շարք առաջավոր կոլտնտեսությունների փորձը  
ցույց ե տալիս, վոր մանր-խմբակային և անհատական  
գործավարձը բրիդադային գործավարձի համեմատու-  
թյամբ զգալի առավելություններ ունի, մանավանդ  
բաղհանի ժամանակի : Այսպես Ամրուրակի ՄՏԿ-ի կոլ-  
տնտեսություններում (Ներքին Վոլգա) բրիդադային  
գործավարձը տալիս եր 1 հեկտար վար, խմբակայինը՝  
1½ հեկտ., տնտեսություններից մեկուժ 4 կոլտըն-  
տեսական խմբակային գործավարձով քաղհանում հ-  
մն որական 2 սաժեն, իսկ անհատական գործավար-  
ձով՝ որական 4 սաժենից ավելի : Անհատական գործա-  
վարձի ժամանակի արտադրողականությունն ավելի յէ  
վնում առավել քան 2 անգամ : Ուպորնայա կայարանի  
կոլտնտեսությունում (Պավլովսկի շրջան) 25-30 հո-  
գուց բաղկացած բրիդադը չեր կարողանում կատարել  
բաղհանի նորմաները : Բաժանվեցին 5-8 հոգուց բաղ-  
կացած խմբակների, և առաջադրանքները գերակա-  
տարվեցին : Մի խմբակը 4 որվա ընթացքում 8 հեկ-  
տարի զիմաց տվեց 9,15 հեկտ., մյուսը՝ 2,25 հեկ-  
տարի զիմաց 4,35 հեկտ. :

Կոլտնտեսությունների կարևորագույն խնդիրն ե  
կարճ ժամանակում անհատական և մանր-խմբակային

գործավարձի անցկացնել բերքահավաքի աշխատանքները, վորակոյ վոր դա տեխնիկապես հնարավոր և (քաղաքան, խուրձ կապել, հունձ, խրձերի փոխադրություն և այլն) :

Դորժավարձն արմատացնելու և ամրացնելու նըպատակով անհրաժեշտ և ամեն կերպ աջակցել առաջավոր կոլտնտեսությունների ցույց տված նախաձեռնությանը գործավարձ սահմանելու բրիգադիների և ընդհանրապես կոլտնտեսությունների հրամանատարական կազմի համար, վորոնք դեռ մինչև որս ել որավարձով են աշխատում և վորոնց նյութական շահերը դեռ ուղղակի չեն շաղկապված նրանց բրիգադում, խմբում, ջոկում, արագրանքի նորմաների ու արտադրական պլանների կառուրման և զերակատարման հետ :

Գործավարձը կոլտնտեսություններում արմատացնելու և ամրացնելու տեսակետից, հատկապես բերքահավաքի շրջանում, վոչ պակաս կարեոր դեր պիտի խաղա պրոցեսիվ գործավարձը, վորի դրական փորձը մենք ունեցանք դեռևս անցյալ տարի :

Դ) Արտադրամեմի նորմաները գործավարձը կոլտնտեսություններում արմատացնելու միջոցն է

Գործավարձը կոլտնտեսություններում արմատացնելու կարևորագույն միջոց են հանդիսանում արտադրանքի նորմաները : Առանց արտադրանքի վորոշակի նորմաների՝ գործավարձն անհնարին և : Խթագրանքի նորման կոնկրետ արտահայտությունն և այն արտաստողականության, վորին իրեւ մինիմումի, պետք և ձգտի յուրաքանչյուր կոլտնտեսականը : Ուստի ամենեվին ել պատահական չե այն փաստը, վոր գործա-

36

վարձը սահմանելիս, կուլակների ազգեցության տակ դաշնվող կամ ուղղակի կուլակային ձգտումներն արտահայտող կոլտնտեսական տարրերը գործավարձը վիճեցնելու փորձեր եյին անում, փորձեր, վորոնք արտահայտվեցին նրանով, վոր նրանք կամ ուղղակի աղիտացիա եյին մղում գործավարձը մտցնելու դեմ, կամ պահանջում եյին այնպիսի ցածր նորմաներ, վորոնք գործականում ի չեք կործանեյին գործավարձը :

«Նորմաներ հարկավոր չեն, վորովհեակ նրանք վո՞չ բոլորի ուժերին են համապատասխանում, մեկը կկատարի, մյուսը չի կատարի : Թող ամեն մի աշխատով աշխատի այնքան, վորքան կամենում ե» (Մայիսի 1-ի անվան կոլտնտեսություն, Ներքին Վորքա) — ահա կուլակային տարրերի մոտավոր պատճառաբանությունն ընդգեմ նորմայի : Ավելի վատանգավոր ե, անշուշտ, վոչ թե ուղղակի աղիտացիան ընդգեմ գործավարձի և արտադրանքի նորմաների, այլ չափազանց ցածր նորմաներ սահմանելու փորձերը : Մի շարք կուտանտեսություններում շրջկոլտնտմիությունների տըռված արտադրանքի նորմաները, վորոնք առանց այդ եւ ցածր եյին, ավելի ևս իջեցվեցին պոկազական տարրերի ճշշման տակ :

Ել ինչո՞վ, յեթի վոչ բացահայտ կուլակային խեղաթյուրմամբ կարելի յե բացատրել այն փաստը, վոր վորոշիւովի անվան կոլտնտեսությունը (Ներքին Վորդա) միևնույն մարզում և աշխատանքի միևնույն պայմաններում գտնվող մյուս կոլտնտեսությունների համեմատությամբ սահմանում և գրեթե յերկու անդամավելի ցածր նորմաներ :

Կոլտնտեսությունը, վորպես սոցիալիստական տի-

37

պի խոշոր ձեռնարկություն, վոր ավելի լավ ե կաղ-  
մակերպված, ավելի լավ ե տեխնիկապես զինված,  
պետք ե շատ հետ թողնի և արդեն հետ ե թողնում վոչ  
միայն մանը անհատական տնտեսության, այլև կու-  
բակային խոշոր տնտեսության արտադրողականու-  
թյունը։ Արտադրանքի նորմաների վերաբերմամբ նման  
մինիմալիստական գիրքավորում ունենալու մեջ ամեն  
նացայտուն կերպով արտահայտվում են աջ ոպորտու-  
նիստական թերահավատությունը կոլտնտեսական շի-  
նարարության հանդեպ և դործավարձը վիճեցնելու  
կուլակային փորձերը։

Գործավարձի այլպիսի աջ ոպորտունիստական,  
կուլակային խեղաթյուրումների շարքը պետք ե դա-  
ռել, մինիմալ նորմաների հետ միասին՝ նաև աշխորե-  
րով չափաղանց բարձր գնահատումներ սահմանելու  
փորձերը, վորպիսին տարեվերջին անպայման կհան-  
դի աշխորերի արժեքի իջեցմանը, հետեւաբար և կոլ-  
տնտեսության անդամների ու անհատ տնտեսատերի  
աչքին կնսեմացնի կոլտնտեսական արտադրության  
արդյունավետությունը։

Անհրաժեշտ ե պայքարել ինչպես նորմաներն ի-  
ջեցնելու, այնպես և չափաղանց բարձր գնահատում-  
ների միջացով աշխորերը չույցությամբ բաժանելու  
դեմ։ Միաժամանակ անհրաժեշտ ե նախագուշացնել,  
վորպեսզի կոլտնտեսությունները խուսափեն կոլտնտե-  
սականների հիմնական մասսայի համար պարզապես  
անմատչելի չափաղանց լարված նորմաները սահմանե-  
րուց։ Այդպիսի «ձախ» շեղումները նորմաների սահ-  
մանման ասպարիզում ամենից ավելի հաճախակի յե-  
րեվոր են դաշիս այն բանում, վոր ճգնաւում են հափա-

սարվել առանձին հարվածային կալոնտեսականների  
ու կորդային ամենաբարձր նորմաներին, վորոնք առայժմ  
կոլտնտեսական մասսայի ուժերից վեր են։ Ուստի, հաշ-  
վի առնելով դարնանացանի փորձը, բերքահավաքի  
ժամանակի, արտադրանքի նորմաները սահմանելիս՝  
անհրաժեշտ ե կողմորոշվել լավագույն կոլտնտեսական-  
ների միջին արտադրանքով։

յի) ձիւու և ժամանակին կատարվող հաշվառումը գոր-  
ծավարձի հիմունիքն ե

«Գործավարձը հնարավոր չե իրականացնել ա-  
ռանց ժամանակին հաշվառման յենթարկելու յուրա-  
քանչյուր կոլտնտեսականի կատարած աշխատանքային  
որերի թիվը։ Դեռ ավելին. առանց հաշվառման հնա-  
րավոր չե կոլտնտեսության, վորպիս բառոր տնտե-  
սության գոյությունը։ Կոլտնտեսություններում հաշ-  
վառումը կազմակերպելու բնագավառում կուսակցա-  
կան կազմակերպությունները պետք ե զեկավարվեն  
լենինի հետեւյալ ցուցմունքերով—«Հաշվառումը և աշ-  
խատանքի քանակի ու մթերքների բաշխման վերա-  
հսկողությունը—դա յե սոցիալիստական վերակա-  
ռուցման եյությունը, յերբ ստեղծված և ապահով-  
ված ե պրոլետարիատի քաղաքական տիրապետությու-  
նը» (կե-ի պլիսումի բանաձից)։

Կոլտնտեսություններում ձիւու հաշվառում կող-  
մանակերպելու հարցը ներկայումս քաղաքական մեծ-  
հարց ե հանդիսանում, վորովհետեւ առանց հաշվառ-  
ման չկա գործավարձ, չկա արտադրանքի նորմաների  
կատարման վերահսկողություն, չկա կոլտնտեսականի  
համար պարզություն։ «Առանց հաշվառման չկա կոլ-

տնաթեսություն, իրակ խոշոր տնամսությունն»—ասում  
եր ընկ. Յակովլեվն իր զեկուցման մեջ։ Ախալները  
հաշվառման առարկեզրում արտավորում են գործա-  
վարձը, հանդում են որավարձի ռեցիդիվին, զինում  
են կուլակին կոլտնտեսության դեմ, գործավարձի  
դեմ, աշխատանքի արտադրողականության բարձրաց-  
ման դեմ նրա մղած պայքարում։ Ներկայումս կոլ-  
տնանություններում հաշվառման դրությունը վոչ մի  
դեպքում բավարար համարել չփ կարելի։ Շնորհիվ այս  
հանդամանքի, վոր կոլտնակուպերատիվ՝ կազմակեր-  
պությունները թույլ զեկավարություն են դույց տա-  
լիս կոլտնտեսություններում հաշվառում կազմակեր-  
պելու գործի նկատմամբ, գորյություն ունեն հաշվառ-  
ման բազմաթիվ և ամեն տեսակ ձևեր, վորոնք հաճախ  
խիստ խառնիճաղանձ և անտրդյունավետ են (չեկեր,  
գրոշմանիշներ, գրքույկներ և այլն)։ Վորովհետեւ բը-  
րդագիրները պատրաստված չեն և կոլտնտեսություն-  
ներում լավ գրադիտ հաշվառողների պակաս և զգաց-  
վում, ուստի չատ հաճախ առանձին կոլտնտեսական-  
ների արտադրանքը սիսալ և վոչ-ժամանակին և գրանց-  
վում։ Հյոնսիսային Կովկասի, Աւկրայինայի և այլ վայ-  
րերի մի շարք կոլտնտեսություններում հաշվառումը  
յետ և մնում արտադրությունից։ Հաշվառումը հետա-  
ձգվում է մինչև ցանքի վերջը, զրանցումը՝ կատար-  
վում է ամիսը մեկ անդամ («Կարմիր Փարոս», Հյու-  
սիսային Կովկաս, «Նոր Կենցաղ», Մուկվայի մարդ)։

Դրանով իսկ կոլտնտեսականը վոչ մի հնարավո-  
րություն չի ունենում ստուգելու, թէ ճիշտ են արդյոք  
կատարված գրանցումները։ Յերբ Բուրյաննու ան-  
գան (Աւկրայինա) կոլտնտեսությունում մարտ ամսվա

40

համար տրված 35 հաշվառման չեկեր ստուգման յեն-  
թարկվեցին, բանից դուրս յեկալ, վոր նրանցից 11-ը  
եյին զբանցված իսկ 7-ն ել հետո եյին ուղղ-  
ված։ Ապրիլ ամսվա 38 չեկերից՝ 11-ն ուղղած, 10-ը  
սիսալ և 7-ը անհասկանալի եյին։ Աշխատանքի սիսալ  
հաշվառումը մի շարք կոլտնտեսություններում պատ-  
ճառ և գարձել որավարձի վերականգնման (որինակ՝  
«Կիմի Տանամյակ» արտելը Աւկրայինայում և այլն)։  
Կոլտնտեսությունները դեռևս բոլորովին չեն մոտե-  
ցել աշխատանքի վորակի հաշվառման, վորը գործա-  
վարձի ժամանակ հսկայական նշանակություն ունի։  
Այսպիսի Աւկրայինայում, Ներքին Վոլգայում, Սիբի-  
րում և Հյուսիսային Կովկասում հետազոտության յեն-  
թարկված 18 կոլտնտեսություններից և վոչ մեկը  
անցյալ տարի աշխատանքի վորակի հաշվառում չի ու-  
նեցել, իսկ այս տարիվ զարնանացանի կամպանիայի  
ժամանակ միայն 3 կոլտնտեսություն մոտեցել են աշ-  
խատանքի վորակի հաշվառման գործին։

Ահա թէ ինչո՞ւ աշխատանքի պարզ, կոլտնտեսա-  
կանի համար հասկանալի հաշվառման կանոնավորման  
հարցը կարեւորագույն մի խնդիր և առաջիկա բերքա-  
հավաքի ժամանակ, յերբ աշխատանքի պլոցենները  
կրարդանան և հետեւբարար ճիշտ ու ժամանակին կա-  
տարված հաշվառումից մեծ մասամբ կախված կլինի  
գործավարձի հաջողությունը, ուրեմն և վողջ կամ-  
